Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնակատար Գագիկ Ջհանգիրյանին

Հարգելի պարոն Ջհանգիրյան,

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ԻՀԱ), ինչպես արդեն տեղեկացրել ենք, իրականացնում է Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության (այսուհետ՝ Ռազմավարություն) և դրանից բխող գործողությունների ծրագրերի 2019-2021 թվականների կատարման այլընտրանքային հասարակական մշտադիտարկում, որը ենթադրում է որակական և քանակական մեթոդների կիրառությամբ Ռազմավարության գործողությունների ծրագրերի իրականացման առաջընթացի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում: Մշտադիտարկման իրականացման հետ կապված ԻՀԱ-ն ակնկալում է Բարձրագույն դատական խորհրդի աջակցությունը:

Ռազմավարությունից բխող 2019-2020 գործողությունների ծրագրով (N 2 հավելված) մշտադիտարկման ժամանակահատվածում իրականացվելիք հետևյալ գործողությունների (Նպատակ 5՝ գործողություններ 1, 2, Նպատակ 5՝ գործողություններ 1, 3, 4, 5, 6, 7) և Ռազմավարությունից բխող 2021-2023 գործողությունների ծրագրով (N 3 հավելված) մշտադիտարկման ժամանակահատվածում իրականացվելիք հետևյալ գործողությունների (Նպատակ 6՝ գործողություն 1, Նպատակ 8՝ գործողություններ 1, 2, 3) համար Բարձրագույն դատական խորհուրդը հանդիսանում է պատասխանատու (համակատարող) մարմին:

ա) Ռազմավարությունից բխող 2019-2020 գործողությունների ծրագիր (N 2 հավելված).

- **Նպատակ 5. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում**
  (Ռազմավարական ուղղություններ՝
  - *Դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման կարգի կատարելագործում*
  - *Բարձրագույն դատական խորհրդի որոշումների ընդունման գործընթացի բարելավում, թափանցիկության և պատճառաբանվածության ապահովում)*

1. Գործողություն 1-ի արդյունքով նախատեսվում է, որ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և կատարելագործում է դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման կարգը: Գործողություն 1-ի

արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: Գործողություն 1-ի իրականացման համար որպես ֆինանսավորման աղբյուր նշված է՝ օրենքով չարգելված աղբյուրներ:

2. Գործողություն 2-ի արդյունքով նախատեսվում է, որ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և կատարելագործում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից որոշումների ընդունման կարգը: Գործողություն 2-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: Գործողություն 2-ի իրականացման համար որպես ֆինանսավորման աղբյուր նշված է՝ օրենքով չարգելված աղբյուրներ:

- **Նպատակ 5. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում**
  (Ռազմավարական ուղղություններ՝
  - *դատավորների կարգավիճակից բխող սոցիալական երաշխիքների ամրապնդում,*
  - *հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացում)*

1. Գործողություն 1-ի արդյունքով նախատեսվում է, որ «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը ներկայացվել է ԱԺ և ուղղված է դատավորի աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացմանը: Գործողություն 1-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ: Գործողություն 1-ի իրականացման համար որպես ֆինանսավորման աղբյուր նշված է՝ օրենքով չարգելված աղբյուրներ:
2. Գործողություն 3-ի արդյունքով նախատեսվում է, որ դատավորների և նրանց աշխատակազմի թվաքանակի ավելացման նպատակով համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների կատարման նախագծերը ներկայացվել են ՀՀ ԱԺ և նախատեսում են դատավորի աշխատակազմի թվաքանակի աճ: Գործողություն 3-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. դատավորների և նրանց աշխատակազմի թվաքանակի ավելացման նպատակով համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների կատարման նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ: Գործողություն 3-ի իրականացման համար որպես ֆինանսավորման աղբյուր նշված է՝ օրենքով չարգելված աղբյուրներ:
3. Գործողություն 4-ի արդյունքով նախատեսվում է, որ դատավորի աշխատակազմի աշխատավարձերի բարձրացման նպատակով համապատասխան իրավական

ակտերում փոփոխությունների կատարման նախագծերը ներկայացվել են ՀՀ ԱԺ և նախատեսում են դատավորի աշխատակազմի աշխատավարձերի բարձրացում: Գործողություն 4-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. դատավորի աշխատակազմի աշխատավարձերի բարձրացման նպատակով համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների կատարման նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ: Գործողություն 4-ի իրականացման համար որպես ֆինանսավորման աղբյուր նշված է՝ օրենքով չարգելված աղբյուրներ:

4. Գործողություն 5-ի արդյունքով նախատեսվում է, որ դատարաններն ապահովված են իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով: Գործողություն 5-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. դատարաններին արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների բարելավման կարիքների գնահատման, առաջնահերթությունները և ժամանակացույցը սահմանելու վերաբերյալ տեղեկանք և սկսված շինարարական աշխատանքների վերաբերյալ փաստաթղթեր: Գործողություն 5-ի իրականացման համար որպես ֆինանսավորման աղբյուր նշված է՝ օրենքով չարգելված աղբյուրներ:
5. Գործողություն 6-ի արդյունքով նախատեսվում է, որ դատարաններն ապահովված են իրենց արդյունավետ գործունեության համար նյութատեխնիկական բազայով: Գործողություն 6-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. դատարաններին արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների կարիքների գնահատման, առաջնահերթությունները և ժամանակացույցը սահմանելու վերաբերյալ տեղեկանք և արդեն տրամադրված աջակցության վերաբերյալ փաստաթղթեր: Գործողություն 6-ի իրականացման համար որպես ֆինանսավորման աղբյուր նշված է՝ օրենքով չարգելված աղբյուրներ:
6. Գործողություն 7-ի արդյունքով նախատեսվում է, որ հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված իրազեկման միջոցառումները ձեռնարկված են, բարձրացել է հանրության վստահությունը դատական իշխանության նկատմամբ: Գործողություն 7-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված իրազեկման միջոցառումների ծրագիրը մշակված է, միջոցառումներն իրականացման փուլում են: Գործողություն 7-ի իրականացման համար որպես ֆինանսավորման աղբյուր նշված է՝ օրենքով չարգելված աղբյուրներ:

բ) Ռազմավարությունից բխող 2021-2023 գործողությունների ծրագիր (N 3 հավելված).

- **Նպատակ 6. Դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում**
  (Ռազմավարական ուղղություններ՝ դատական համակարգի գործունեության վերաբերյալ հաշվետվությունների և վիճակագրության հրապարակում)

1. Գործողություն 1-ով 2021 թվականին նախատեսվում է, որ մշակվել են հանրության համար հասանելի առցանց ռեժիմում գործող դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակման կառուցակարգի օրենսդրական հիմքերը և ծրագրային ապահովումը: 2022 թվականի արդյունքով նախատեսվում է, որ հանրության համար հասանելի առցանց ռեժիմում գործող դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակման կառուցակարգը ներդրված է և նպաստում է դատարանների նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը: Գործողություն 1-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. հանրության համար հասանելի առցանց ռեժիմում գործող դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակման կառուցակարգը ներդրված է: Գործողություն 1-ի իրականացման համար որպես ֆինանսավորման աղբյուր նշված է՝ օրենքով չարգելված աղբյուրներ:

- **Նպատակ 8. Դատարանների գործունեության արդյունավետության բարձրացում**
  (Ռազմավարական ուղղություններ՝
  - *Դատարանների ծանրաբեռնվածության նվազեցում և դատական քննության ողջամիտ ժամկետի ապահովում*
  - *Դատավորների և նրանց աշխատակազմի կարողությունների զարգացում)*

1. Գործողություն 1-ով նախատեսվում է, որ 2021 թվականին մշակվել է դատավորների և դատավորների օգնականների թվի ավելացմանն ուղղված իրավական ակտի նախագիծը: 2022 թվականի արդյունքով նախատեսվում է, որ դատավորների և դատավորների օգնականների թվի ավելացմանն ուղղված իրավական ակտի նախագիծը քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության, լայն հանրության հետ, հաստատվել է Կառավարության կողմից և ներկայացվել ԱԺ: Գործողություն 1-ի իրականացման համար որպես ֆինանսավորման աղբյուր նշված է՝ պետական բյուջե և օրենքով չարգելված աղբյուրներ:
2. Գործողություն 3-ով նախատեսվում է, որ 2021 թվականին դատարանները շարունակում են ապահովվել իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով՝ ըստ սահմանված առաջնահերթությունների և ժամանակացույցի: 2023 թվականի արդյունքով նախատեսվում է, որ դատարաններն ապահովված են իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով: Գործողություն 3-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. դատարաններին արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների բարելավման կարիքների գնահատման, առաջնահերթությունները և ժամանակացույցը սահմանելու վերաբերյալ տեղեկանք և սկսված շինարարական աշխատանքների վերաբերյալ փաստաթղթեր: Գործողություն 3-ի իրականացման համար որպես ֆինանսավորման աղբյուր նշված է՝ օրենքով չարգելված աղբյուրներ:

Ուստի հաշվի առնելով վերոնշյալը, խնդրում ենք, մինչև 2022 թվականի հունվարի 18-ը ներառյալ, ըստ 2019, 2020, 2021 թվականների իրականացված ժամանակահատվածների և առանձին գործողությունների, տրամադրել Ռազմավարությունից բխող 2019-2020 գործողությունների ծրագրով (N 2 հավելված) մշտադիտարկման ժամանակահատվածում իրականացվելիք հետևյալ գործողությունների (Նպատակ 5՝ գործողություններ 1, 2, Նպատակ 5՝ գործողություններ 1, 3, 4, 5, 6, 7) և Ռազմավարությունից բխող 2021-2023 գործողությունների ծրագրով (N 3 հավելված) մշտադիտարկման ժամանակահատվածում իրականացվելիք հետևյալ գործողությունների (Նպատակ 6՝ գործողություն 1, Նպատակ 8՝ գործողություններ 1, 2, 3) *արդյունքների և ստուգման միջոցների իրականացումը վկայող տեղեկատվություն, իսկ այն գործողությունների դեպքում, որոնց կատարման արդյունքները և ստուգման միջոցները նախատեսված են եղել իրավական ակտերի նախագծերի մշակում, կառուցակարգերի, այդ թվում էլեկտրոնային համակարգերի ներդնում, ուսումնասիրությունների, տեխնիկական նկարագրերի, վերապատրաստումների, հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքների կամ այլ միջոցառումների իրականացում և դրանք որևէ եղանակով ամփոփված են կամ դրանց իրականացման մասին հասանելի աղբյուրներում առկա է համապատասխան տեղեկատվություն, ապա մշտադիտարկման ընթացքում դրանց որակական գնահատման նպատակով խնդրում ենք տրամադրել դրանց ամփոփումները, միջոցառումների (դասընթացների) մասնակիցների քանակը՝ ըստ պատկան մարմինների և մասնակից այլ կազմակերպությունների, պատկան մարմիններից և շահագրգիռ այլ կազմակերպություններից ստացված կարծիքների ամփոփումը և այլն, իրավական ակտերի նախագծերը և դրանց հիմնավորումները, ինչպես նաև դրանց էլեկտրոնային հղումները կամ կցել վկայող համապատասխան փաստաթղթերը:*

Խնդրում ենք նաև, այն գործողությունների համար, որոնց համար ֆինանսական աղբյուր է նախատեսված պետական բյուջեն և օրենքով չարգելված այլ աղբյուրները, տրամադրել այդ գործողությունների ֆինանսավորման գումարի չափի և ֆինանսավորման աղբյուրների մասին համապարփակ տեղեկատվություն:

Նաև տեղեկացնում ենք, որ Ռազմավարությունից բխող 2019-2020 և 2021-2023 գործողությունների ծրագրերով (N 2 և N 3 հավելվածներ) մշտադիտարկման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է առցանց ֆոկուս խմբային քննարկումների իրականացում հիմնական շահագրգիռ կողմերի և Գործողությունների ծրագիրն իրականացնողների (կատարողների, համակատարողների) հետ: Հաշվի առնելով վերոգրյալը, 2022 թվականի հունվարի 26-ին, ժամը 11:00-ին **ՀՀ արդարադատության նախարարության, Բարձրագույն դատական խորհրդի, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, ՀՀ արդարադատության ակադեմիայի, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ոստիկանության և ՀՀ կադաստրի կոմիտեի** մասնագետների մասնակցությամբ իրականացնում ենք առցանց ֆոկուս խմբային քննարկում, որի ընթացքում օգտագործվելու են նաև սույն գրությամբ հարցվող տեղեկությունները:

Առցանց ֆոկուս խմբային քննարկման ընթացքում նախատեսված է օգտագործել սույն գրությանը կից ներկայացված Հավելված 1-ում նշված հարցաշարը՝ դրանում նշված

յուրաքանչյուր պատասխանատու (համակատարող) մարմնին վերաբերելի գործողությունների շրջանակներում:

Խնդրում ենք ֆոկուս խմբային քննարկմանը ապահովել Բարձրագույն դատական խորհրդի 1-ից 3 մասնագետների մասնակցությունը, որոնք տիրապետում են Ռազմավարությունից բխող 2019-2020 գործողությունների ծրագրով (N 2 հավելված) մշտադիտարկման ժամանակահատվածում իրականացվելիք հետևյալ գործողությունների (Նպատակ 5՝ գործողություններ 1, 2, Նպատակ 5՝ գործողություններ 1, 3, 4, 5, 6, 7) և Ռազմավարությունից բխող 2021-2023 գործողությունների ծրագրով (N 3 հավելված) մշտադիտարկման ժամանակահատվածում իրականացվելիք հետևյալ գործողությունների (Նպատակ 6՝ գործողություն 1, Նպատակ 8՝ գործողություններ 1, 2, 3) ընթացքին, որոնցով Բարձրագույն դատական խորհուրդը հանդիսանում է պատասխանատու (համակատարող) մարմին, տրամադրելով մասնագետների անուն ազգանունը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն:

Քննարկումը կանցկացվի առցանց, հետևյալ հղմամբ. https://zoom.us/j/93872383723?pwd=UDdTZ3phN1dhUWEwd3lDVkxGdW5mUT09,

Հանդիպման կոդը՝ 938 7238 3723, գաղտնաբառը՝ 680736:

Խնդրում ենք սույն գրության պատասխանը և հարցվող տեղեկատվությունը էլեկտրոնային եղանակով ուղարկել ԻՀԱ-ի info@armla.am պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

Հարգանքով՝

Կարեն Զաքոյան

Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ

Կատարողներ՝

Սյուզաննա Սողոմոնյան

Դատաիրավական և հակակոռուպցիոն հարցերով փորձագետ

Լուիզա Մելքումյան

Ծրագրային օգնական